ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կողմից հայտարարված վարձակալությամբ հողատարածք տրամադրելու մրցույթը տեղի կունենա Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 62 հասցեում գտնվող Արտաշատի համայնքապետարանում 2023 թվականի դեկտեմբերի 5-ին ժամը 11-ին: Մրցույթի կդրվի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Սահմանապահների փողոց 7/1 հասցեում գտնվող, 03-001-0666-0002 կադաստրային ծածկագրով, 0,2574հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասը՝ ընտանի կենդանիների՝ թռչունների պահպանման համար ժամանակավոր տարածք կազմակերպելու նպատակով:

Լոտ 1 - Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Սահմանապահների փողոց 7/1 հասցեում գտնվող, 03-001-0666-0002 կադաստրային ծածկագրով, 0,2574հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամաս: Տրամադրվող հողամասի վարձավճարի մեկնարկային գինը սահմանել՝ տարեկան 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Վարձակալության ժամկետը սահմանել 10 (տասը) տարի:

Մրցույթին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերն են՝ անձը հաստատող փաստաթղթերը:

Մրցույթի մասնակցության վճարը կազմում է 15000 ՀՀ դրամ: Մասնակցության տոմսի արժեքը կազմում է՝ 1000 ՀՀ դրամ:

Մրցույթի նախավճարի ճափ է սահմանվել վարձավճարի մեկնարկային գնի 5 %, մրցույթի քայլի չափ հաշվարկված մեկնարկային գնի 5 %:

Մրցույթի հայտերի, մասնակցության վճարների անդորագրերի, պահանջվող մյուս փաստաթղթերի ընդունումը կդադարեցվի մրցույթի նշանակման օրից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ՝ մինչև 2023 թվականի նոյեմբերի 29-ը ներառյալ:

Առաջացած հարցերի և տեղեկությունների համար դիմել Արտաշատի համայնքապետարան մրցույթային հանձնաժողովին /կազմակերպչին/:

Հեռաղոս՝ 091-191-151

Մրցույթավար՝ Համայնքի գլխավոր ճարտարապետ Վարդան Այվազյան

Արձանագրող՝ Համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Արամայիս Բադալյան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Կ.ՄԿՐՏՉՅԱՆ**